ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«07» հունիսի 2016 թվականի N:182-Ա գ.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՇԻՐԱԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ, 5-րդ, 7-րդ, 13-րդ և 17-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N956-Ն հրամանի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ համայնքի ղեկավարի

2016 թվականի մայիսի 11-ի N28 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Շիրակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2016 թվականի փետրվարի 22-ի նիստի թիվ 11 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Շիրակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3 տարուց ավելի խորհրդի անդամ հանդիսացող.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Լեոնիդ Դավթյանի, Խաչատուր Ժամակոչյանի լիազորությունները,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Աստղիկ Ռաֆայելյանի լիազորությունները,

3) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամ Անահիտ Սաղաթելյանի լիազորությունները:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված և 2013 թվականի հոկտեմբերի 30-ին Խորհրդի կազմում հաստատված Մելքոն Վարդանյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2016 թվականի հոկտեմբերի 30-ը:

3. Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված և 2013 թվականի սեպտեմբերի 11-ին Խորհրդի կազմում հաստատված Լաուրա Քոչարյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2016 թվականի սեպտեմբերի 11-ը:

4. Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված և 2014 թվականի հունիսի 27-ին Խորհրդի կազմում հաստատված Ազնիվ Մուրադյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2017 թվականի հունիսի 27-ը:

5. Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված և 2013 թվականի սեպտեմբերի 11-ին Խորհրդի կազմում հաստատված Թամարա Ալանյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2016 թվականի սեպտեմբերի 11-ը:

6. Խորհրդի կազմում 3 տարի ժամկետով հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Լեոնիդ Դավթյանին, Խաչատուր Ժամակոչյանին,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Ռուզաննա Ռուշանյանին,

4) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Հեղինե Քոչարյանին:

7. Հաստատել Խորհրդի անվանական կազմը՝ համաձայն հավելվածի:

8. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին» N 51-Ա որոշման N62 հավելվածը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի հունիսի «07» N182-Ա որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՇԻՐԱԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Վարդանյան Մելքոն	- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված,
Դավթյան Լեոնիդ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Ժամակոչյան Խաչատուր	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Ռուշանյան Ռուզաննա	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
Քոչարյան Լաուրա	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Մուրադյան Ազնիվ	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Ասլանյան Թամարա	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
Քոչարյան Հեղինե	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան
Իսկականի հետ ճիշտ է